ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

ԵՄ աջակցություն հանուն Հայաստանի զարգացման՝ միգրանտների ներուժի հզորացման միջոցով. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ-Հայաստան

Իրականացման ժամանակահատված: 01.09.2020 - 01.09.2024

ԱԼԳ երկրներ:

Armenia

Ընդհանուր բյուջե: € 3 500 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Iris business incubator

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ:

facebook.com/EU4IMPACT, facebook.com/ICMPDinArmenia

Նախագծի նկարագրություն:

Ծրագրի նպատակն է դեպի ՀՀ ուղղվող դրամական փոխանցումները մոբիլիզացնելու միջոցով նպաստել աշխատանքային միգրանտների, վերադարձողների և նրանց ընտանիքների անդամների բարեկեցությանը և գործնական ներուժի հզորացմանը համայնքային զարգացման ու աշխատատեղերի ստեղծման նպատակով: Իրականացումը ապահովվելու է հետևյալ գործողությունների միջոցով՝

- Միգրանտների և նրանց ընտանիքների անդամների իրազեկվածության բարձրացում ներդրումային հնարավորությունների մասին և վստահության ամրապնդում պետության և Սփյուռքի միջև;
- Միգրանտների կողմից կատարվող ներդրումների ծավալների ընդլայնում և որպես արդյունք՝ գործարար նախաձեռնությունների և աշխատատեղերի թվի աճ;
- Սփյուռքի և աշխատանքային միգրանտների կողմից ներդրումներ կատարելու համար բազմաբնույթ և նորարար մեխանիզմների մշակում, որի հիման վրա հետագայում կձևավորվի ներդրումային համակարգ հայաստանյան բանկերի և ֆինանսական ինստիտուտների համար:

Ակնկալվող արդյունքներ:

Գործնական առումով ծրագրի շնորհիվ պետական կառավարման մարմինների շրջանում կամրապնդվի Հայաստանի տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման գործում միգրանտների (այդ թվում՝ աշխատանքային) կարևոր դերի գիտակցումը: Կթարմացվի Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնի (ՆԶԱԿ) ուսուցման մեթոդաբանությունը, ինչից մեծ օգուտներ կքաղեն հարյուրավոր շահառուներ: Սոցիալ-տնտեսական առումով ծրագիրն ուղղակիորեն կաջակցի հարյուր հիսուն շահառուների՝ նախաձեռնելու սեփական բիզնեսը համապատասխան դրամաշնորհների և վարկերի օգնությամբ: Հաշվի առնելով այդ շահառուների ընտանիքների անդամներին և հավանական մատակարարներին՝ անուղղակի աջակցություն կստանան հարյուրավոր քաղաքացիներ:

Ռազմավարական առումով ծրագիրը կնպաստի ՓՄՁ զարգացմանն ուղղված քաղաքականությունների կատարելագործմանն ու հզորացմանը՝ հատկապես խոցելի խմբերի համար, ինչպես նաև միգրացիայի և զարգացման մասով: